ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՁՐԱԳԱԼՈՒՅՑԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 ապրիլի 2020 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց,
եւ յարութեամբն Իւրով մեզ զկեանս պարգեւեաց.
Նմա փառք յաւիտեանս. ամեն:

(Ժամագիրք)։

Սիրելի՛ Վեհափառ Տեր,

Միաբա՛ն եղբայրներ եւ հավատացյա՛լ ժողովուրդ,

Աստվածորդու հրաշափառ Հարության տոնի առիթով շնորհավորում եմ ամենքիս և աղոթում, որ լուսավոր այս տոնը առատ բարիքներ պարգևի մեր ժողովրդին, երկրին ու Մայր Եկեղեցուն, շուտափույթ հեռացնի աներևույթ չարիքը՝ մանրէն, աշխարհից և մարդկանց մեջ զորացնի հավատքը, հույսը, սերն ու կարեկցանքը։

Մեր Փրկչի Հարության այս ավետիսը Մայր Աթոռի վանքերի զանգերի ավետաբաշխ ղողանջներով թող մուտք գործի ընտանիքներից ներս, մխիթարի սգավորներին, բժշկի հիվանդներին, փրկի նեղյալներին, երջանկություն, սեր ու խաղաղություն պարգևի ամենքին։ Թեև հանգամանքների բերումով շատերը չկարողացան եկեղեցու կանթեղից վառել Ճրագալույցի իրենց մոմերը, բայց ընկրկելու կարիք չկա. տոնական սեղանի շուրջ հավաքված՝ թող աղոթք հնչի, տան սուրբ անկյունում պահվող մոմերը վառվեն, հոգևոր լույսն ու ջերմությունն օրվա խորհրդավորությամբ պատեն տոնական մթնոլորտը և տունը ջերմացնեն՝ ստեղծելով տաքուկ միջավայր։

Այս օրերին դպրոցի և համալսարանի վերածված մեր տները թող դառնան նաև աղոթատներ, թող վառվեն հավատքի մոմեր, ու խունկ ծխվի, և սրտաբուխ աղոթքը երջանկություն, սեր ու խնդություն պարգևի տաճար դարձած մեր ընտանիքներին։

Հարության ավետիսը թող հասնի հայրենիքի սահմանները պաշտպանող հայրենասիրության ու եղբայրասիրության օրինակ ծառայող մեր քաջարի և հպարտ զինվորներին ու սպաներին, ուժ և զորություն պարգևի նրանց, որպեսզի ամուր պահեն հողը հայրենի։

Նվիրական այս տոնը համբերություն և կորով թող պարգևի կյանքեր փրկող, մարդկանց առողջացնող, հիվանդների նկատմամբ ծնողական խնամք դրսևորող մեր սիրելի բժիշկներին ու բուժաշխատողներին, որոնք, հայոց սահմանապահ մարտիկների նման թողած տուն ու երեխա, ամուսին ու ծնող, ապահովում են մեր ժողովրդի ապրելու իրավունքը։ Ցանկանում եմ ասել, որ մենք նրանց շատ ենք սիրում։

Աստվածորդու՝ մահին հաղթելու տոնը թող մեր ոստիկաններին, ուժային կառույցների ծառայողներին ամուր կամք ու վստահություն շնորհի, որ շարունակեն պահպանել մեր սիրելի Հայաստան աշխարհի անվտանգությունն ու ժողովրդի անդորրը։

Բնության վերազարթոնքն ավետող զատկական այս տոնը թող օրհնաբեր լինի՝ շինականին և ուսուցչին, վարպետին ու ճարտարագետին, հողագործին ու ռանչպարին, որ շարունակեն բարիք արարել՝ շենացնելով աստվածաէջ մեր երկիրը։

Հիսուսի հրաշափառ Հարության տոնը Հայոց Եկեղեցու համար թող նոր հորիզոններ բացի, նոր տեսիլքներով ու երազանքներով խնկաբույր մեր վանքերում ու եկեղեցիներում հնչող անդադրում աղոթքները հույսի, սիրո, խաղաղության և երջանկության մեջ պահեն մեր սիրելի ժողովրդին։ Որ մարդկանց հոգին դառնա բուրումնավետ դրախտ, լույսի աղբյուր, կյանքն իմաստավորվի բարությամբ ու մարդասիրությամբ, ներողամտությամբ ու ողորմածությամբ, համբերատարությամբ ու հավատքի արգասաբեր գործերով։

Եւ ժամասացության՝ «Քրիստոս մեռելներից հարություն առավ, մահվամբ մահին հաղթեց և Իր հարությամբ մեզ կյանք պարգևեց» ավետիսով շարունակենք ապրել միմյանց նկատմամբ հոգատարությամբ, սիրով ու հաշտությամբ, այն հույսով, որ այս բոլոր փորձություններն անցնելուց հետո մեր հնամենի եղեղեցիները կրկին կլցվեն հավատացյալներով, ու վաղն ավելի լավ կլինի։

Քրիստոս յարեաւ ի մեռելոց.
Օրհնեալ է յարութիւնը Քրիստոսի։